ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 11—12, 1959 Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Լ. Ա. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ, ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ

(ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՊԱՐՏԻԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1917—1918 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ)

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատ., Երևան, 1951

Ռևոլյուցիոն անհատների գործունեության լուսաբանումը գիտական կարևոր խնդիր է։ Ականավոր բոլշևիկ գործչին նվիրված ուսումնասիրությունը նպաստում է ոչ միայն բազմակողմանիորեն ճանաչելու տվյալ անհատին, այլև օգնում է ընթերցողին ավելի հանգամանորեն կողմնորոշվելու ժամանակաշրջանի դեպքերի ու անցքերի մեջ, ավելի լավ հասկանալու և պատկերացնելու հերոսական այն պայքարը, որ մղել է Կոմունիստական պարտիան՝ կապիտալի լծից աշխատավոր զանգվածների ազատագրության համար։ Ռևոլյուցիոն գործիչներին նվիրված աշխատություններն ունեն նաև ակտուալ նշանակություն. դրանք կոչված են օժանդակելու սովետական մարդկանց դաստիարակությանը մարքսիզմ-լենինիզմի գաղափարներով, գաղափարներ, որոնց իրականացման համար հսկայական գործ են կատարել պարտիայի պանծալի զավակները։

Այդ տեսակետից մոտենալով խնդրին, չի կարելի չողջունել Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի գիտաշխատող Լ. Խուրշուդյանի «Ստեփան Շահումյան» ծավալուն մենագրությունը, որտեղ հեղինակը նպատակադրվել է ուսումնասիրել «Ս. Գ. Շահումյանի ռևոլյուցիոն գործունեության ամենարեղմնավոր ու եռուն շրջանը՝ 1917—1918 թթ., կանգ առնելով հատկապես նրա պետական գործունեության վրա» (էջ 10)։

Գովելի նպատակադրում և խրախուսելի գործ։

Ստ. Շահումյանի մասին գրվել են բավականին թվով հոդվածներ և աշխատություններ, նրա՝ որպես Կոմունիստական պարտիայի ականավոր գործիչներից մեկի կյանքն ու գործը միշտ էլ ըստ արժանվույն գնահատվել և լուսաբանվել է մեր պարբերական մամուլի էջերում, քաղաքական (և ոչ միայն քաղաքական) գրականության մեջ։ Սակայն մեզանում տակավին չկար առանձին մի ուսումնասիրություն՝ նվիրված 1917—1918 թվականներին Ստ. Շահումյանի կատարած պետական գործունեությանը։ Մինչդեռ այդ տարիները նրա գործունեության ամենափայլուն ժամանակաշրջանն է, որովհետև 1917—1918 թվականներին էր, որ Ստ. Շահումյանը դրսևորեց ոչ միայն պարտիական, այլև պետական գործչի իր ողջ տաղանդը։ Խուրշուդյանի այս աշխատությունը ծածկում է այդ բացը։

Ելնելով իր առջև դրված խնդրի գիտական ու քաղաքական կարևորությունից, հեղինակը հանգամանորեն ուսումնասիրել է այդ ժամանակաշրջանի Անդրկովկասի պատմությունը, որը և նրան հնարավորություն է տվել, հենվելով փաստական առատ նյութերի վրա, տալ Ստ. Շահումյանի պարտիական ու պետական (հատկապես պետական) գործունեությունը, շեշտում ենք, այն խստորեն կապելով ժամանակաշրջանի դեպքերի ու անցքերի հետ։ Վերջին հանգա-

մանքն էլ, այսինքն շարադրանքի այն մեկնակետը, որի շնորհիվ անհատը չի անջատվել իր ժամանակի իրադարձություններից, գիրքը դարձրել է փաստաթուղթ, իսկ այնտեղ բարձրացված հարցերի շարադրանքը՝ հնարավորին չափ լրիվ և կապակցված։

Արժե նաև սկզբից ևեթ դրվատել Ստեփան Շահումյանի գործունեության այս շրջանի՝ հեղինակի կողմից կատարված բաժանումը։ Իր աշխատության չորս բաժիններում Լ. Խուրշուդյանը գլուխ առ գլուխ նկարագրում և վերլուծում է Ստ. Շահումյանի գործունեությունը բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիան սոցիալիստականի վերաճելու և Կովկասում Սովետական իշխանության համար մղված պայքարում, նրա աշխատանքը որպես Բաքվի Ժողկոմսովետի նախագահ և նրա ղեկավարած պայքարը ինտերվենտների ու ներքին հակառևոլյուցիայի դեմ։

Մենագրության առաջին գլխում տրված են 1917 թ. փետրվարից մինչև հոկտեմբերը երկրում, մասնավորապես Անդրկովկասում, տեղի ունեցած իրադարձությունները և դրանց ֆոնի վրա՝ Շահումյանի, որպես բոլշևիկյան պարտիայի ղեկավար գործչի, ծավալած աշխատանքը։

Դեռևս 1917 թվականի մարտի 6-ին Ստ. Շահումյանը հեռակա կերպով ընտրվել էր Բաքվի Սովետի նախագահ։ Դրանից երկու օր հետո նա վերադառնում է Բաքու և ձեռնամուխ լինում քաղաքի կոմունիստական աշխատանքները և մասսաների ռևոլյուցիոն պայքարը ղեկավարելու գործին։ «Շահումյանը Անդրկովկասի բարդ պայմաններում ռևոլյուցիայի բոլոր էտապներում, իր խորաթափանց հայացքով դեպքերի քաոսի մեջ իսկույն գտնում էր այն հիմնական օղակը, որից բռնելով հնարավոր էր լինում տիրապետել ամբողջ շղթային» (էջ 19),— իրավացիորեն գրում է հեղինակը և իր այդ դրույթն ապացուցում Ստ. Շահումյանի գործունեության հետ առնչվող շատ հարցերի լուսաբանմամբ։ Աշխատության այս բաժնում հեղինակը մանրամասն ուսումնասիրում և քննարկում է Ստ. Շահումյանի պարտիական ու հրապարակախոսական գործունեությունը, նշում այն հսկայական աշխատանքը, որ Ա. Ջափարիձեի, Ի. Ֆիոլետովի, Մ. Աղիդրեկովի և բոլշևիկ մյուս գործիչների հետ միասին նա կատարել է Բաքվում և ընդհանրապես Անդրկովկասում՝ աշխատավորներին համաձայնողական պարտիաների ազդեցությունից դուրս բերելու, նրանց բոլշևիկյան պարտիայի շուրջը համախմբելու, ժամանակավոր կառավարության և նրա կամակատար Անդրկովկասյան հատուկ կոմիտեի հակաժողովրդական քաղաքականությունը մերկացնելու, ամբողջ իշխանությունը Սովետներում կենտրոնացնելու ուղղությամբ։ Այս շրջանում Ստ. Շահումյանի գրած հոդվածների լեյտմոտիվը ռևոլյուցիայի առաջին՝ բուրժուա-դեմոկրատական էտապից նրա երկրորդ սոցիալիստական էտապին անցնելու լենինյան դրույթի պրոպագանդումն է։ Ինչպես նշվեց, աշխատության այս բաժնում հեղինակը հատուկ ուշադրություն է դարձրել Ստ. Շահումյանի կողմից ժամանակավոր կառավարության քաղաքականության մերկացման վրա։ Այդ առիթով էլ հեղինակը արժեքավորել է Ստ. Շահումյանի մի շարք հոդվածները։

Ստ. Շահումյանը պարտիական ականավոր գործիչ էր, ճանաչված ու սիրված ղեկավար։ Ստ. Շահումյանի գործունեությունը չէր սահմանափակվում պարտիական ու ժուռնալիստական աշխատանքներով։ Ինչպես միշտ, առավելս ռևոլյուցիայի զարգացման այս փոթորկալից ամիսներին, նա օգտագործում էր մասսաների հետ կենդանի կապը պահպանելու աշխատանքի լենինյան ոճը։

Ինչպես ցույց է տվել հեղինակը, Ստ. Շահումյանը զեկուցումներ էր կարդում բանվորական ակումբներում, ֆաբրիկաներում ու գործարաններում, ելույթներ էր ունենում այնպիսի ժողովներում, որտեղ հանդես էին գալիս նաև մենշևիկներն ու էսեռները և իրեն հատուկ սկզբունքայնությամբ մերկացնում վերջիններիս հակառևոլյուցիոն քաղաքականությունը։ Բազմազան էր նրա ելույթների թեման, բայց բոլոր դեպքերում այդ շրջանում դրանք ընդգրկում էին ընթացիկ մոմենտի կարևոր հարցերը՝ կապված բոլշևիկյան պարտիայի քաղաքականության, նրա ստրատեգիայի ու տակտիկայի հետ։ «Ռուսական ռևոլյուցիայի բնույթի մասին», «Ընթացիկ մոմենտը և մեր խնդիրները», «Պրոլետարիատի դերը ռուսական ռևոլյուցիայում», «Մոսկվայի խորհրդակցությունը և հակառևոլյուցիան», «Ազգային հարցը և ռևոլյուցիան», «Պատերազմ և հաշտություն», — ահա բոլորովին ոչ լրիվ ցանկը այն հարցերի, որոնց շուրջը Ստ. Շահումյանը դասախոսություններ է կարդացել 1917 թվականի գարնանն ու աշնանը։

Ստ. Շահումյանի այս ժամանակաշրջանի գործունեության մեջ հիմնական տեղ էր գրավում պարտիական աշխատանքը, Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարումը։ Նկատի ունենալով այդ՝ Խուրշուդյանը բարեխղճությամբ ուսումնասիրել է Ստ. Շահումյանի պարտիական գործունեությունը և կանգ առել պարտիական այն բազմաթիվ միջոցառումների ու կոնֆերանսների վրա, որոնք ընթացել են Շահումյանի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ։ Ընդ որում, հեղինակին հաջողվել է ցույց տալ, որ իր պարտիական ու հասարակական գործունեությամբ Ստ. Շահումյանը կարողացել է ճիշտ և ճկուն կերպով անցկացնել լենինյան քաղաքականությունը, հարցերի լուսաբանմանն ու իրականացմանը մոտենալ դիալեկտիկորեն՝ ժամանակի պահանջներին և պարտիայի առաջադրած խնդիրներին համապատասխան։

Կովկասում Սովետական իշխանության հաստատման համար Ստեփան Շահումյանի ղեկավարությամբ մղված պայքարի պատմության լուսաբանումը աշխատության երրորդ գլխի առանցքն է։ Այդ հարցի բազմակողմանի պարզաբանման համար հեղինակն օգտագործել է փաստական հարուստ նյութ։ Նա, մասնավորապես, հանգամանորեն լուսաբանել է Ստ. Շահումյանի մասնակցությունն ու ղեկավար դերը 1917 թ. հոկտեմբերից մինչև 1918 թ. փետրվարը Բաքվում և Թիֆլիսում տեղի ունեցած բոլշևիկյան կոնֆերանսներին, բանվորական ժողովներին ու միտինգներին։ Արդեն 1917 թ. հոկտեմբերի 27-ին Ստ. Շահումյանը Ա. Ջարարիձեի հետ միասին Բաքվի բանվորների և զինվորների դեպուտատների Սովետի ընդլայնված կոնֆերանսում պահանջում էր, որպեսզի Սովետը անհապաղ ճանաչի ու աջակցի Ռուսաստանի Սովետական կառավարությանը և հասնի այն բանին, որ տեղում ևս իրականացվեն Մեծ Հոկտեմբերի նվաճումները, այսինքն ամբողջ իշխանությունն անցնի Բաքվի Սովետին։ Սովետի հաջորդ, հոկտեմբերի 31-ին ընդլայնված կոնֆերանսում, որը նախագահում էր ինքը, Ստ. Շահումյանը, քննադատելով համաձայնողական պարտիաներին, նա կրկին առաջարկեց իշխանությունը Սովետին հանձնելու բանաձև, որը և ընդունվեց ձայների մեծամասնությամբ։ Նոյեմբերի 3-ին կոնֆերանսը ընտրեց Գործադիր Կոմիտե, որի մեջ մտան Ստ. Շահումյանը, Ա. Ջափարիձեն, Ի. Ֆիոլետովը և ուրիշներ։

Հենվելով փաստական հավաստի տվյալների վրա, հեղինակն անում է այն ճիշտ եզրակացությունը, թե «ռևոլյուցիայի առաջին ամսվա ընթացքում Բաքվի

բոլշևիկները Ստ. Շահումյանի ղեկավարությամբ իրենց ձեռքը վերցրին Սովետի ղեկավարությունը և եռանդուն պայքար սկսեցին ամբողջ իշխանությունը Սովետի ձեռքում կենտրոնացնելու և կապիտալիստական հարաբերությունները լիկվիդացիայի ենթարկելու համար» (էջ 110)։

Սակայն էսեռները, մենշևիկներն ու դաշնակցականները հավաքում են իրենց ուժերը և ստեղծում Հատարակական Անվտանգության Կոմիտե, որը հակառևոլյուցիայի կենտրոնն էր։ Հեղինակը ընդգծում է Շահումյանի պայքարը այդ կոմիտեի դեմ։

Հենվելով Բաքվի Սովետի վրա, գրում է հեղինակը, Ստեփան Շահումյանը համառ պայքար սկսեց սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի համար ամբողջ Կովկասում։ Գրախոսվող աշխատության արժանիքն այն է, որ հեղինակին հաջողվել է բացահայտել Կոմունիստական պարտիայի ականավոր գործչի խորիմաստ աշխատանքը, տալ եռոկտեմբերյան օրերին նրա ծավալած անդադրում գործունեության գրեթե լրիվ պատկերը։

Ուշագրավ է նաև աշխատության այս բաժնի այն մասը, որտեղ տրված է Շահումյանի գործունեությունը որպես Կովկասի Գործերի Արտակարգ Կոմիսարի։ Գրախոսվող աշխատության արժանիքներից է նաև այն, որ այնտեղ ամենայն մանրամասնությամբ պատմվում է Կովկասի Գործերի Արտակարգ Կոմիսար Ստ. Շահումյանի աշխատանքի մասին նրա նշանակման օրից ընդհուպ մինչև Թիֆլիսից Բաքու մեկնելը (1918 թ. փետրվարի վերջերին)։ Այդ հարցը մեր պատմա-ռևոլյուցիոն գրականության մեջ հաճախ է շոշափվել, սակայն գրեթե միշտ՝ թռուցիկ և ընդհանուր գծերով։ Ընթերցողն այդ հարցին վերաբերող էջերում (147—188) հանդիպում է Ստ. Շահումյանի գործունեության բազմաթիվ ուշագրավ դրվագների, որոնք իրենց բարեխիղճ ուսումնասիրումն են գտել գրքում։ Եվ իրոք հետաքրքրությամբ են ընթերցվում պարտիական կոնֆերանսներում ու ժողովներում, մասսայական միտինգներում, Կովկասյան բանակի երկրային երկրորդ համագումարում Ստ. Շահումյանի տված զեկուցումներին ու դասախոսություններին նվիրված էջերը, այդ օրերին Վ. Ի. Լենինի հետ նրա նամակագրական կապը։

Գրախոսվող աշխատության հեղինակը փորձ է արել ապացուցել 1917 թ. աշնանը ռևոլյուցիոն սիտուացիայի առկայությունը Անդրկովկասում, նշել է այդ սիտուացիան ապստամբության չվերածվելու պատճառները այդ թվում նաև բոլշևիկների Երկրային Կոմիտեի սխալները։ Հեղինակը ընթերցողին գրեթե ապացուցում է իր այդ դրույթի ճշմարտացիությունը։

Լ. Խուրշուդյանի աշխատության ուշագրավ բաժիններից է երրորդ գլուխը, ուր տրվում է Ստ. Շահումյանի պետական գործունեությունը։ Դասակարգային մարտերի այդ հուզումնալից ժամանակաշրջանում նա հմտորեն ղեկավարում է «առաջին սոցիալիստական պետության ստեղծումը Անդրկովկասում»։ Տալով Ստ. Շահումյանի, որպես Բաքվի ժողովրդական Կոմիսարների Սովետի նախագահի, գործունեության ծավալուն նկարագիրը, հեղինակը կանգ է առել բոլոր այն հիմնական միջոցառումների լուսաբանման վրա, որոնք ընթացել են Ստ. Շահումյանի նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ։ Լենի գա 1918 թ. մարտյան քաղաքացիական կռիվների ղեկավարումը և Բաքվում նորաստեղծ Սովետական իշխանության ամրապնդման աշխատանքների իրականացումը, թե սոցիալիստական վերափոխությունների անցկացումը,— ամենուրեք Ստ. Շահումյանը հանդես է գալիս իբրև գլխավորող, դեպքերի ու իրադարձությունների

մեջ ճիշտ կողմնորոշվող անհատ, որը, հեղինակի խոսքերով ասած, «իր գործունեության ընթացքում միշտ հենվում էր լայն մասսաների վրա, խորին հավատ տածելով նրանց ստեղծագործական ուժերի նկատմամբ» (էջ 291)։

Ստ. Շահումյանի ամենաակտիվ ղեկավարությամբ և մասնակցությամբ, Բաքվի ժողկոմսովետը կատարեց բանկերի և նավթի աղգայնացում, անցկացրեց հողային ռեֆորմ, լուրջ միջոցառումներ ձեռնարկեց լուսավորության և պարենավորման գործը կառավարելու և Սովետական Ռուսաստանին նավթ ուղարկելու ուղղությամբ։

Հեղինակը իր գրքում միաժամանակ կարողացել է ցույց տալ, որ կրոնական ու ազգային հատկություններով լի, նացիոնալիստական պարտիաների կողմից օրավուր շիկացող մթնոլորտում և ներքին ու արտաքին թշնամիների միասնական ճակատի դեմ մղվող պայքարի ծանր պայմաններում Բաքվի բոլշևիկները Ստ. Շահումյանի ղեկավարությամբ, հետևողականորեն անցկացնում էին ինտերնացիոնալիստական քաղաքականություն։

Հաճելի է ընդգծել, որ Լ. Խուրշուդյանը դեպքերի ու փաստերի էնպիրիկ նկարագրող չէ, թեև տեղ-տեղ հանդիպում ենք նմանօրինակ էջերի։ Նա իր ակտիվ, ննոդ մոտեցումն ու գնահատականն է տալիս իրադարձություններին, մի հանգամանք, որն, անշուշտ, առավել է բարձրացնում նրա աշխատության գիտական նշանակությունը։ Այդ է ապացուցում, օրինակ, Բաքվում Սովետական իշխանության հաղթանակի ժամանակի հարցի առթիվ նրա տված մեկնաբանությունը (էջ, էջ 211—217)։ Չհամաձայնվելով սովետական պատմաբաններ Ջ. Իրրահիմովի, Ի. Հուսեյնովի, Ե. Տոկարժևսկու այն կարծիքին, թե Բաքվում Սովետական իշխանություն հաստատվել էր 1917 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, հեղինակը բազմաթիվ փաստերով և, մասնավորապես, հենց իրենց՝ Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժման ղեկավարներ Ստ. Շահումյանի, Ա. Ջափարիձեի, Մ. Ազիզբեկովի և Ա. Միկոյանի ելույթներից կատարած մեջբերումներով հիմնավորում է իր այն տեսակետը, որ «Բաքվում մինչև Կոմունայի հաղթանակը պրոլետարիատի դիկտատուրա չի եղել և գոյություն է ունեցել երկիշխանություն» (էջ 217)։ Տեղին ենք համարում այդ կապակցությամբ այստեղ մասամբ ցիտել 1918 թ. ապրիլի 19-ին Բաքվի Սովետում Ստ. Շահումյանի կարդացած զեկուցումից, որից հեղինակը ընդարձակ մեջբերում է կատարել իր գրքում։ Խոսելով մինչև Կոմունան իշխանության մասին, Շահումյանը ասում էր. «Մեր իշխանությունը եղել է բուրժուական իշխանություն։ Մենք չէինք խառնվում տնտեսական կյանքի մեջ, բանվորության, քաղաքի ու գյուղի չքավորության վիճակը բավարարելու ուղղությամբ մենք չէինք աշխատում։ Մենք անգամ չսահմանափակեցինք շահագործողների տիրապետությունը — այդ բոլորը շնորհիվ այն բանի, որ մենք ռեալ ուժեր չունեինք» (էջ 214)։ Թվում է, որ կոմենտարիան ավելորդ է։ Նշենք սակայն, որ Ստ. Շահումյանի այդ նույն միտքն են հաստատում աշխատության մեջ Ա. Ջափարիձեի, Մ. Ազիզբեկովի և Ա. Մ.կոյանի ելույթներից կատարված քաղվածքները։

Պակաս հետաքրքրություն չի ներկայացնում աշխատության վերջին բաժինը, ուր շարադրված է միջազգային իմպերիալիզմի և ներքին հակառևոլյուցիայի դեմ Ստ. Շահումյանի ղեկավարությամբ Բաքվի կոմունայի մղած հերոսական պայքարի պատմությունը։ Հեղինակը այս բաժնում նշում ու հիմնավորում է Կոմունայի անկման պատճառները։

Ավելորդ չենք համարում ուշադրավ այս աշխատության հեղինակին անել մեր մի քանի դիտողությունները։

Մի շարք հարցեր, որոնք աշխատության թեմայի հետ առնչվում են ոչ անմիջականորեն, խիստ ընդարձակ են լուսաբանված, շատ էջեր են գրավում և ինքնըստինքյան, հեռանում են հիմնական հարցից։ Դա հատկապես վերաբերում է առաջին գլխին։ Այս գլուխը, որ զբաղեցնում է 11—90 էջերը, կարելի էր զգալի չափով կրճատել։ Դրա համար պետք է ընդհանուր բնույթի մի շարք հարցեր, ինչպիսիք են՝ իրադրությունն Անդրկովկասում Փետրվարյան ռևոլյուցիայից հետո, Ժամանակավոր կառավարության և Անդրկովկասյան հատուկ կոմիտեի քաղաքականության քննադատությունը և այլն, շարադրել ավելի սեղմ և հակիրճ։ Այնինչ առաջին գլխի մի շարք էջեր այն տպավորությունն են թողնում, որ աշխատությունը ոչ թե Շահումյանին է նվիրված, այլ Անդրկովկասի՝ 1917 թվականի Փետրվարյան պատմությանը։ Այդ նույնը, հիշտ է սակավ չափով, կարելի է ասել աշխատության մյուս բաժիններում Անդրկովկասի արտաքին դրությանը, Անդրկովկասյան կոմիսարիատին ու Սեյմին, Շամխորի դեպքերին վերաբերող հարցերի շարադրանքի մասին։

Գրքի առաջաբանում (էջ 9—10) Լ. Խուրշուդյանը քննադատում է Բաղիրովի հակամարքսիստական այն կոնցեպցիան, որով ժողովրդի այդ երդվյալ թշնամին, խեղաթյուրելով պատմությունը, ձգտում էր Կոմունայի անկման պատճառները «բացատրել» կոմունարների «կոպիտ տակտիկական սխալներով»։ Այդ առթիվ աշխատության 10-րդ էջում հեղինակը նշում է, որ Կոմունայի աշխատանքներում, ինչպես և ամեն մի մեծ գործում, եղել են, իհարկե, թերություններ, որոնք սակայն «այնպիսի բնույթի չէին, որպեսզի պատճառ դառնային Կոմունայի անկմանը»։ Անհրաժեշտ էր այդ թերությունները պարզաբանել, որպեսզի ընթերցողը պատկերացում կազմի թե հեղինակը ինչ թերությունների մասին է խոսում։ Բայց գրքում այդ չի արված։ Այդ առումով մեր այս դիտողությունները երբեք չեն կարող հերքել աշխատության 340—344 էջերի այն տողերը, որտեղ հեղինակը փորձել է նշել այդ թերությունները։ «Բաքվի բոլշևիկների գործունեության բնագավառում վիճելի հանդիսացող մի շարք հարցեր՝ վերաբերմունքը դեպի Լսեռա-մենշևիկյան և դաշնակցական պարտիաները, ագրարային, ազգային և մի շարք այլ հարցերը, դրանք ոչ թե սխալներ են, այլ ավելի ճիշտ թերություններ»։ Այս տողերից դժվար է կռահել, թե որոնք են Կոմունայի ղեկավարների աշխատանքի թերությունները։ Հեղինակը, չգիտես ինչու, վիճելի է համարում իր կողմից թվարկվող վերոհիշյալ հարցերի բնագավառում բոլշևիկների գործունեությունը, այն ժամանակ, երբ իր գրքում նա այդ հարցերի լուսաբանումը տվել է բավականին մանրամասնորեն և նշել Կոմունայի ղեկավարների ճիշտ քաղաքականությունը նաև այդ հարցերի կատարման ժամանակ։

Ընդհանուր առմամբ լավ հայերենով գրված այս աշխատության մեջ նկատելի են լեզվական թերություններ, ոճական անհարթություններ։ Մի երկու օրինակ։ Մեր կարծիքով ավելի դյուրըմբռնելի և հայերեն է գործածել հակառևոլյուցիա, քան թե կոնտրռևոլյուցիա։ Գրքի 206 էջում կարդում ենք. «Այդ օրգանը (այսինքն Ռևոլյուցիոն Պաշտպանության Կոմիտեն (Վ. Մ.) հաշտվելու էր միայն բանվորների և զինվորների դեպուտատների Սովետի առջև»։ Պարզ է, որ պետք է լինի հաշվետու էր։ Երբեմն լեզվական ոչ ճիշտ ձևակերպումը հանդեցնում է մտքի սխալի։ Այսպես, աշխատության 32-րդ էջում գրված է. «Բոլ-

շեիկների և մյուս համաձայնողական պարտիաների միջև ընկած էր մի անհատակ անդունդ»։ «Մյուսը» այստեղ ոչ միայն ավելորդ է, այլև սխալ է գործածված, որովհետև այդ մյուսը հավասարության նշան է դնում բոլշևիկների ու համաձայնողական պարտիաների միջև։ Կան նաև կետադրական սխալներ։

Ամփոփենք։ Լ. Խուրշուդյանի «Ստեփան Շահումյան» աշխատությունը գովելի և ուշագրավ գիրք է և արժանի մեր ընթերցողների ուշադրությանը։

Վ. Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ